

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ
ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ**

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.

- Օգտագործեք սև կամ կապույտ թանաք: Հստակ տպեք տեղեկությունները:
- Դուք (կամ ձեր լիազորված ներկայացուցիչը) պետք է լրացնեք այս ձևի ՄԱՍ A-ն, որպեսզի վարչաշրջանին տեղեկացնեք, թե ում եք ընտրել ձեզ հաստատված ծառայությունները տրամադրելու համար:
- Եթե դուք մի քանի մատակարարողներ ունեք, դուք պետք է լրացնեք առանձին ձև յուրաքանչյուր մարդու համար, ով ձեզ հաստատված ծառայություն է տրամադրելու:
- Դուք պետք է ստորագրեք փաստերի ճամաչման հատվածն այս ձևի ՄԱՍ C-ում:
- Խնդրում ենք վերադարձնել այս լրացված և ստորագրված ձևը վարչաշրջանին: Վարչաշրջանը կպահպանի բնօրինակը, իսկ ձեզ կուղարկի պատճենը:

ՄԱՍ A. ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ	
1. Ստացողի անունը՝	
2. Վարչաշրջանի IHSS գործի համարը՝	
3. Մատակարարողի անունը՝	
4. Մատակարարողի հասցեն՝ Քաղաքը, նահանգը, փոստային կոդը՝	
5. Մատակարարողի հեռախոսահամարը՝	
6. Մատակարարողի ծննդյան ամսաթիվը՝	
7. Մատակարարողի սոցիալական ապահովության #*՝	
8. Մատակարարողի սեռը (նշեք վանդակը)՝	<input type="checkbox"/> Արական <input type="checkbox"/> Իգական
9. Մատակարարողի հարաբերությունը ստացողի հետ (եթե առկա է)՝	<input type="checkbox"/> Ծնող <input type="checkbox"/> Երեխա <input type="checkbox"/> Ամուսին/Չուզընկեր <input type="checkbox"/> Պահապան <input type="checkbox"/> Խնամակալ <input type="checkbox"/> Այլ _____
10. Մատակարարողի աշխատանքը սկսելու ամսաթիվը՝	

*ԱԿՆԱՐԿ. սոցիալական ապահովության համարների հավաքումը պահանջվում է 1986 թ. Ներգաղթի բարեփոխումների և վերահսկման ակտով, Հանրային օրենք 99-603 (8 USC 1324a)՝ հաստատելու համար անձի ինքնությունը և Միացյալ Նահանգներում աշխատելու իրավասությունը:

- Ես ընտրում եմ վերոնշյալ անձին որպես իմ IHSS մատակարարող: Այս անձը տրամադրելու է որոշ կամ բոլոր ծառայությունները, որոնք հաստատված են վարչաշրջանի կողմից:

ՄԱՍ B. ՄՏԱՑՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆ ԵՄ ՈՐ.

- Այն անձը, ում ես ընտրել եմ որպես իմ մատակարարող, չի կարող ստանալ դաշնային և/կամ նահանգային գումար ինձ ծառայություններ տրամադրելու համար, մինչև որ նա չբավարարի մատակարարողի բոլոր նշված պահանջները, ներառյալ՝ Մատակարարողի անդամագրման ձևը (SOC 426) լրացնելը, ստորագրելը և վերադարձնելը (անձամբ), մատնահետքեր հանձնելը և քրեական անցյալի պատմության ստուգում անցնելը, մատակարարողի կողմնորոշում անցնելը, և Մատակարարի անդամագրման պայմանագիր (SOC 846) ստորագրելը և հանձնելը:
- Ես կստանամ ծանուցում վարչաշրջանից՝ տեղեկացնելով ինձ, եթե այն անձը, որին ես ընտրել եմ որպես իմ մատակարարող, չի համապատասխանում ներկայացված պահանջներին կամ որ նա իրավասու չէ լինելու IHSS մատակարարող:
- Եթե այնուամենայնիվ ես օգտվում եմ այդ անձի ծառայություններից, մինչև նա կգրանցվի որպես IHSS մատակարարող, և վարչաշրջանն ինձ ծանուցում է ուղարկում՝ տեղեկացնելով, որ այդ անձն իրավասու չէ լինելու IHSS մատակարարող, ես ստիպված կլինեմ ինքս վճարել նրան այն ծառայությունների համար, որոնք նա տրամադրել է մինչև իրեն ոչ-իրավասու ճանաչելը, և բոլոր այն ծառայությունների համար, որոնք նա կտրամադրի վարչաշրջանի ծանուցումից հետո:
- Ոչ վարչաշրջանը, ոչ էլ նահանգը պատասխանատվություն չեն կրի ցանկացած բողոքների և/կամ կորուստների համար, որոնք կպատճառի ինձ այն անձը, որին ես կնախընտրեմ վարձել որպես իմ IHSS մատակարարող: Ես համաձայն եմ չներգրավել նահանգը և վարչաշրջանը, նրանց գրասենյակները, գործակալներին և աշխատողներին և իմ վրա վերցնել պատասխանատվությունը ցանկացած անձին պատճառած վնասի և/կամ կորուստների համար այն անձի կողմից, ում ես կվարձեմ որպես իմ IHSS մատակարարող:
- Վարչաշրջանը կարող է տեղեկություն տրամադրել իմ հաստատված ծառայությունների և դրանց ժամերի մասին այն անձին, որին ես կընտրեմ որպես իմ ծառայությունների մատակարարող: Վարչաշրջանը կուղարկի իմ մատակարարողին IHSS Ստացողի հաստատված ժամերի և ծառայությունների ծանուցում (SOC 2271):
- Ըստ նահանգային օրենքի, առավելագույն ժամերի քանակը, որը IHSS մատակարարողը կարող է աշխատել՝ տրամադրելով հաստատված ծառայություններ աշխատանքային շաբաթվա ընթացքում, կազմում է 66 ժամ (հանած որևէ պահանջվող կրճատումները): Աշխատանքային շաբաթը սկսում է 12:00 a.m.-ից (կեսգիշեր) կիրակի ու ավարտվում է 11:59 pm-ին հաջորդ շաբաթ օրը:
- Ամսվա համար իմ հաստատված ծառայության ընդհանուր ժամերը բաժանվելու են շաբաթական հաստատված քանակի:
- Ես կարող եմ թույլ տալ իմ մատակարարողին աշխատել իր նորմալ աշխատանքային ժամերից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, առանց վարչաշրջանից համաձայնություն ինդրելու, եթե դրա հետևանքով իմ մատակարարողը՝
 1. Չի աշխատում 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, և
 2. Չի աշխատում ամսվա համար իմ հաստատված ընդհանուր ժամերից ավել:

- Եթե իմ մատակարարողը սովորաբար աշխատում է ինձ համար 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, ես կարող եմ թույլ տալ, որ նա արտաժամյա աշխատի ինձ համար աշխատանքային շաբաթվա ընթացքում, եթե նա ավելի քիչ ժամեր է աշխատելու հաջորդ աշխատանքային շաբաթ(ների)վա ընթացքում, որպեսզի ես չգերազանցեմ իմ հաստատված ամսական ժամերը:
- Ես պետք է վարչաշրջանից բացառություն խնդրեմ, եթե ինձ հարկավոր է, որ իմ մատակարարողն աշխատի 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, և նա սովորաբար ինձ համար չի աշխատում ավելի քան 40 ժամ աշխատանքային շաբաթվա ընթացքում:
- Եթե ես հաստատված բացառություն չստանամ, իմ մատակարարողը խախտում կունենա:
- Նույնիսկ եթե վարչաշրջանը հաստատի բացառության իմ խնդրանքը, ես պետք է ամեն այնպես, որ իմ մատակարարողն ավելի քիչ ժամեր աշխատի հաջորդ աշխատանքային շաբաթ(ների)վա ընթացքում, որպեսզի ես չգերազանցեմ իմ հաստատված ամսական ժամերը:
- Ես երբեք չեմ կարող թույլ տալ իմ մատակարարողին աշխատել ավելի քան 66 ժամ (հանած որևէ պահանջվող կրճատումները) աշխատանքային շաբաթվա ընթացքում, եթե իհարկե իմ մատակարարողն ու ես չենք գտնվում մեկ առ մեկ ստացող/մատակարարող հարաբերություններում, ու ես ստանում եմ ամսական թույլատրված առավելագույն ծառայության ժամերը:
- Վարչաշրջանն ինձ ծանուցում կուղարկի ամեն անգամ, երբ իմ մատակարարողը խախտում է ունենում: Եթե իմ մատակարարողն ունենա երեք խախտում, նա երեք ամսով կզրկվի IHSS տրամադրելու իրավունքից: Եթե երեք ամսվա հեռացումից վերադառնալուց հետո նա կրկին խախտում ստանա, ապա նա մեկ տարով կհեռացվի մատակարարողի աշխատանքից:
- Իմ մատակարարողը չի վճարվում ուտելու ժամանակահատվածների համար (լանջի ընդմիջումներ), երբ նա աշխատում է ինձ հաստատված ծառայություններ տրամադրելու համար: Ես նրան թույլ չեմ տա ուտելու ժամանակահատվածներ վերցնել (լանջի ընդմիջումներ), եթե դրանք 30 րոպեից պակաս են, ու այդ ժամանակահատվածում նա կազատվի աշխատանքի բոլոր պարտականություններից:

ՄԱՍ Ը. ՓԱՍՏԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ես հասկանում եմ և համաձայն եմ հետևել այս ձևում թվարկված բոլոր պահանջներին:

ՍՏԱՑՈՂԻ ԿԱՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝	ԱՄՍԱԹԻՎ՝
---	----------

ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝

FOR COUNTY USE ONLY

WORKER NAME:	DATE:
--------------	-------